Արձանագրություն N 19/9-3

"ՔԵՆԴԼ-ԳՀԱՊՁԲ-19/9" ծածկագրով ARMEPS համակարգի միջոցով իրականացվող գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի ամփոփման նիստի

ք. Երևան 08 նոյեմբերի 2019թ. Ժամը 10:00

Մասնակցում էին՝

Հանձնաժողովի նախագահ (ԳԱՊ)	Գ. Ցականովա,
Գնահատող անդամ (ԳԱ)՝	Ստ. Թաթիկյան,
Բացող անդամներ (ԲԱ)՝	Մ. Գյուլումյան, Ա. Պետրոսյան,
Հանձնաժողովի քարտուղար (ՄՀՄ)՝	Ա. Բաղրամյան

1. Հանձնաժողովի նիստի օրակարգը հաստատելու մասին

Հաստատել հանձնաժողովի նիստի հետևյալ օրակարգը՝

1. ՀՀ ՊԵԿ-ից ստացված Տեղեկատվության գնահատում:
2. Առաջին տեղ զբաղեցրած մասնակիցների կողմից հաստատված, առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագրի գնահատում:
3. Գնահատող հանձնաժողովի նիստերի անցկացման ժամանակացույցի մասին:

Ընդունվել է որոշում. կողմ՝ 4, դեմ՝ 0:

2. ՀՀ ԿԱ ՊԵԿ-ից ստացված Տեղեկատվության գնահատում

2.1 ՀՀ ՊԵԿ-ից ստացված Տեղեկատվության համաձայն առաջին տեղեր զբաղեցրած մասնակիցները՝ «Մեդիսար» ՍՊԸ-ն և «Փինք Ֆլամինգո Գ և Ա Կենտրոն» ՍՊԸ-ն, հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ՀՀ պետական բյուջեի նկատմամբ չունեն ժամկետանց հարկային պարտավորություններ:

3. Առաջին տեղեր զբաղեցրած մասնակիցների կողմից հաստատված, առաջարկվող ապրանքների ամբողջական նկարագրի գնահատում

3.1 Առաջին տեղեր զբաղեցրած մասնակիցները սահմանված կարգով և ժամկետում էլեկտրոնային փոստի միջոցով գնահատող հանձնաժողովին են ներկայացրել իրենց կողմից հաստատված, առաջարկվող ապրանքների ամբողջական նկարագիրը (Հրավերի հավելված NN 3 և 3.1): Ապրանքների ամբողջական նկարագիրը համապատասխանում է Հրավերով սահմանված՝ գնման առարկաների տեխնիկական բնութագրերին:

Հիմք ընդունելով 2.1 և 3.1 կետերը և գնահատող հանձնաժողովի 01.11.2019թ. N19/9-2 նիստի 8.1 կետի եզրակացությունը հանձնաժողովը որոշեց.

1. ՔԵՆԴԼ-ԳՀԱՊՁԲ-19/9 ծածկագրով գնման ընթացակարգի թիվ 1 և 2 չափաբաժիններով առաջին տեղ զբաղեցրած «Մեդիսար» ՍՊԸ-ին և թիվ 3 չափաբաժնով առաջին տեղ զբաղեցրած «Փինք Ֆլամինգո Գ և Ա Կենտրոն» ՍՊԸ-ին ճանաչել ընտրված մասնակիցներ:
2. Հաստատել և գնումների էլեկտրոնային տեղեկագրում հրապարակել <u>պայմանագրեր կնքելու որոշման մասին հայտարարությունը և ընտրված մասնակիցների իրական շահառուների մասին տվյալները</u>:
3. «Գնումների մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի 3-րդ կետի համաձայն սույն ընթացակարգի հետ կապված անգործության ժամկետը 5 օրացուցային օր է:

Ընդունվել է որոշում. կողմ՝ 4, դեմ՝ 0:

4. Գնահատող հանձնաժողովի նիստերի անցկացման ժամանակացույցը հաստատելու մասին

4.1 Հիմք ընդունելով ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշման «Գնումների գործընթացի կազմակերպման կարգի» 29-րդ կետը՝ պայմանագիրը կնքելուն հաջորդող օրը սույն ընթացակարգի մասով Գնահատող հանձնաժողովը համարվում է լուծարված:

Մասնակցում էին՝

Հանձնաժողովի նախագահ	_____	Գոհար Ցականովա
անդամներ	_____	Ստեփան Թաթիկյան
	_____	Միքայել Գյուլումյան
	_____	Արմեն Պետրոսյան
Հանձնաժողովի քարտուղար	_____	Արծրուն Բաղրամյան